Ծառայությունների մատուցման պայմանագիր 900/3

ք. Երևան «20» 01 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Քրիստինե Ենոքի Դանիելյան (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 010661858, տրված՝ 13.11.2018թ., 006-ի կողմից, սոց. քարտ՝ 5704920365) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում մատուցել տեսա-լուսանկարահանման և մոնտաժման ծառայություններ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 աշխատանքները կատարել անձամբ,

2.1.2 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան,

2.1.3 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.1.4 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է

2.2.1 կատարողին անհրաժեշտ պայմաններ ստեղծել աշխատանքի կատարման համար,

2.2.2 ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց դիմաց,

2.2.3 վճարել Կատարողի կատարած ծախսերը, եթե աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ է գալիս աշխատանքները շարունակելու անհնարինություն կամ աննպատակահարմարություն՝ Կատարողի մեղքից անկախ հանգամանքների հետևանքով:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3. Օգտագործել աշխատանքների իրավական պահպանության ենթակա արդյունքները

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1 Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է պայմանագրի կատարողական ակտը երկկողմանի ստորագրելուց հետո՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող №1 հավելվածով սահմանված սակագներով (առանց հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների):

3.1.1 Սույն պայմանագրի 3.1-րդ կետում նախատեսված վճարվող գումարի մեջ ներառվում է նաև տրանսպորտային ծախսերը, ներառյալ՝ աշխատանքի կատարման վայր հասնելու համար առաջացող, ինպես նաև՝ համապատասխան տրանսպորտային միջոցով գույքի տեղափոխման ծախսերը:

3.2 Հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին կողմերն այլ համաձայնության չգան:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մինչև 20.01.2021թ.:

4.2 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Այլ պայմաններ

5.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

5.2 Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթներով:

5.3 Եթե Պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, դա չի ազդում մյուս կետերի վրա, և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41ա թիվ մեկ գանձապետական բաժանմունք Հ/Հ 900013288023 ՀՎՀՀ 01223338 ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյան _____	Ա.Ա.Հ. Քրիստինե Դանիելյան Հասցե՝ ք. Երևան Ավան Դուրյան 28 շենք բն. 51 Նույնականացման քարտ՝ 010661858 տրված 13.11.2018թ. 006-ի կողմից _____

900011288025

Հ/Հ 15700293679502000

Հարկադիր կատարումն ապահովող

ծառայության տնտեսական բաժնին

Առաջարկ

Ես՝ Քրիստինե Դանիելյանս, սույնով հայտնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող

ծառայության կողմից 16.01.2020թ. հայտարարված՝ ֆոտո-լուսանկարահանման և տեսանկարահանման մրցույթի շրջանակներում կարող եմ մատուցել վերը նշված ծառայությունները 1ժամը՝ 10000 դրամ արժեքով.

ֆոտո-լուսանկարահանում - 1ժամը՝ 10000 դրամ

տեսանկարահանում – 1ժամը 1խցիկը (камера)՝ 10000 դրամ

վիդեոմոնտաժ - 1ժամը 1խցիկը (камера)՝ 10000 դրամ, 1ժ 2խցիկը (камера)՝ 17000 դրամ

հնչյունային ռեժիսոր - 1ժամը՝ 10000 դրամ

լուսային էֆեկտներ- լուսավորություն՝ 3000K-5500K ապահովում

մեկնաբան (դիկտոր) – 1տեսանյութը կարդալը՝ 10000 դրամ

Հայտնում եմ նաև, որ ունեմ դրանք մոնտաժելու համար անհրաժեշտ կրթություն, հմտություններ և տեխնիկական միջոցներ:

Մասնագիտական փորձի վերաբերյալ հայտնում եմ, որ այդ գործունեությամբ զբաղվում եմ 7 տարի, նմանատիպ ծառայություններ մատուցել եմ՝

« 02» հասարակայնական կապերի և լրատվական վարչությունում,

« ԱԻՆ » ՃԿԱԿ օպերատիվ լրատվության բաժնում:

17.01.2020թ.

Քրիստինե Դանիելյանս

Հավելված №1
«20» հունվարի 2020 թվականին
կնքված № 900/3 պայմանագրի

ՍԱԿԱԳՆԵՐ

ՏԵՍԱ-ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Ծառայություն	Գին (ՀՀ դրամ)
1.	ֆոտո-լուսանկարում	1 ժամ – 10000 ՀՀ դրամ
2.	տեսանկարահանում	1 ժամ 1 խցիկ – 10000 ՀՀ դրամ
3.	վիդեոմոնտաժ	1 ժամ 1 խցիկ – 10000 ՀՀ դրամ 1 ժամ 2 խցիկ – 17000 ՀՀ դրամ
4.	հնչյունային ռեժիսոր	1 ժամը - 10000 ՀՀ դրամ
5.	մեկնաբան (դիկտոր)	1 տեսանյութը կարդալ – 10000 ՀՀ դրամ

Ապահովել լուսային էֆեկտներ՝ 3000K-ից 5500K:

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41ա թիվ մեկ գանձապետական բաժանմունք Հ/Հ 900013288023 ՀՎՀՀ 01223338 ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյան _____	Ա.Ա.Հ. Քրիստինե Դանիելյան Հասցե՝ ք. Երևան Ավան Դուրյան 28 շենք բն. 51 Նույնականացման քարտ՝ 010661858 տրված 13.11.2018թ. 006-ի կողմից _____

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20.01.2020թ. կնքված թիվ 900/3 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին

ք. Երևան «20» 01 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Քրիստինե Ենոքի Դանիելյանը (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 010661858, տրված՝ 13.11.2018թ., 006-ի կողմից, սոց. քարտ՝ 5704920365) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայն 20.01.2020թ. կնքված թիվ 900/3 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2-րդ կետի՝ Պայմանագրի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) «Պատվիրատու» սունյակում «Հ/Հ 900013288023» հաշվեհամարը փոխարինել «Հ/Հ 900011288025» հաշվեհամարով:

2) «Կատարող» սունյակում «Ա.Ա.Հ. Քրիստինե Դանիելյան» բառերից հետո լրացնել հետևյալ հաշվեհամարը՝ «Հ/Հ 1570029367950200 «Ամերիաբանկ» ՓԲԸ»:

2. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի գործողության ավարտը:

4. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ք. Երևան, Հալաբյան 41ա
թիվ մեկ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338
ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար

Դ. Բեգինյան _____

Կատարող
Քրիստինե Դանիելյան

Հ/Հ 1570029367950200
«Ամերիաբանկ» ՓԲԸ

ք. Երևան, Ավան, Դուրյան 28 շենք, բն. 51
նույնականացման քարտ՝ 010661858, տրված՝ 13.11.2018թ., 006-ի կողմից

Քրիստինե Դանիելյան _____

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20.01.2020թ. կնքված թիվ 900/3 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «20» հունվարի 2021թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Քրիստինե Ենոքի Դանիելյանը (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 010661858, տրված՝ 13.11.2018թ., 006-ի կողմից, սոց. քարտ՝ 5704920365) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայն 20.01.2020թ. կնքված թիվ 900/3 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2-րդ կետի՝ Պայմանագրի 4.1-ին կետում «20.01.2021թ.» փոխարինել «20.01.2022թ.»:

2. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև «20.01.2022թ.»:

4. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	Քրիստինե Դանիելյան
	Հ/Հ 1570029367950200 «Ամերիաբանկ» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 41ա թիվ մեկ գանձապետական բաժանմունք Հ/Հ 900011288025 ՀՎՀՀ 01223338 Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	ք. Երևան, Ավան, Դուրյան 28 շենք, բն. 51 նույնականացման քարտ՝ 010661858, տրված՝ 13.11.2018թ., 006-ի կողմից
Գ. Միրիջանյան _____	Քրիստինե Դանիելյան _____

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ • 01223338 •